600.0423.14.11.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2018 թվականի №423Ա

քաղ. Երևան

«ԻՍՏԵՅՏ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԸՆԴ ԱԴՄԻՆԻՍԹՐԵՇՆ ՔԱՄՓՆԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1 հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն որոշումը և հաշվի առնելով «Իստեյտ Մենեջմենթ ընդ Ադմինիսթրեյշն Քամփնի» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի նոյեմբերի 1-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «Իստեյտ Մենեջմենթ ընդ Ադմինիսթրեյշն Քամփնի» փակ բաժնետիրական ընկերության հայտը և Սյունիքի մարզի Հալիձոր գյուղում շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար տրամադրել 156.450ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն՝ 10 տարի գործողության ժամկետով:
2. Հաստատել «Իստեյտ Մենեջմենթ ընդ Ադմինիսթրեյշն Քամփնի» փակ բաժնետիրական ընկերությանը Սյունիքի մարզի Հալիձոր գյուղում շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար տրամադրվող 156.450ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. «Իստեյտ Մենեջմենթ ընդ Ադմինիսթրեյշն Քամփնի» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում №900005330213 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի նոյեմբերի 15-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք.Երևան
14 նոյեմբերի 2018թ.